յաթոռոյ, եւ աքսորեաց զնա Կայսրն Զենոն հանդերձ որդւովք իւրովք 'ի դղեակն Կապադովկեայ, ուր սովալլուկ վճարեցան 'ի կենաց։ Հա՛ն Զենոն զհրովարտակն միաբանութեան ըստ թելադրութեան Ակակիոսի հայրապետի, յորում մերժէր զԺողովն Քաղկեդոնի։ Վճարեցաւ Զենոն 'ի կենաց, և ա՛ռ ծիրանին Անաստաս (491)։ Սկիզբն լինէր սաստկութեամբ յուզելոյ մեծի դժտութեան յեպիսկոպոսունս զԺողովոյն Քաղկեդոնի, որոց կամակից իսկ էր Կայսրն. ընկեցան յաթոռոց ոմանք յերեւելի եպիսկոպոսաց և աքսորեցան, ընդ որս էին Եղիա հայրապետ Երուսաղէմի և Սաբայ վանահայր։

Ժողովն Քաղկեդոնի 'ի սկզբանէ և այսր ոչ ընկալաւ եկեղեցին Հայոց, այլ միայն 'ի զննին եկաց հանդիսի խռովութեանց եւ դժտութեանց եպիսկոպոսաց և այլոց, որ եւ զկնի ինքեան եւս ունէր հասանիլ։ Ոչ ընկալան նաեւ Եգիպտացիք, Եթովպացիք և Ասորիք, այնքան հակառակեալ միմեանց մինչեւ չաղախել զձեռս եւ ներկել զսեղանս արեամբ, զորմէ ասացաք սուղ ինչ բանիւ։ Ի ժողովի անդ ոչ դատան 'ի հարցն Հայոց. զի մեծն Սահակ եւ սուրբն Մեսրովպ վաղ իսկ վախճանեալ էին, եւ որք մնացին զկնի նոցա չէր հնար թողուլ զաշխարհն անխնամ, զի արդէն հուրն Պարսկական Ատրուշանաց և սպառնալիք թագաւորին ահ արկանէր բառնալ և ջնջել զքրիստոնէութիւն յաշխարհէն Հայոց, և տնկել 'ի տեղի նորա զկրօնս մոգութեան։ Թէպէտ եւ Հայք խնդրեցին օգնութիւն 'ի Թէոդոսէ, այլ տարաժամ վախճան նորա եղեւ խափան խոստմանն. իսկ Մարկիանոս ոչ միայն անտես արար զխնդիրս Հայոց, այլ եւ դաշինս կռեաց ընդ թագաւորին Պարսից՝ չլինիլ ձեռնտու Հայոց ոչ զինուք եւ ոչ այլ ինչ իրօք, յորմէ վատահութիւն առեալ նորա անկասկած դիմեաց 'ի վերայ աշխարհին Հայոց, որ և եղեւ պատերազմն Վարդանանց (451), ուր անկան բազումք ընդ զօրավարին, իշխանք եւ վարդապետք մեր վտարեցան յօտարութիւն եւ տառապեցան 'ի դանս, 'ի բանտս եւ 'ի մահունս իսկ գլխովին, զորոյ հանդամանս գրեցին երկար Եղիշէ եւ Ղազար վարդապետք ականատեսք. զի թէպէտ յաւուրս Յովհաննու Մանդակունւոյ